ցՀինգ ազգ յիշին. այլ յԺԳ դարու զեղան ընդ այն ԹամԹարք և Նուաձեցին զնոսա և զայլ ազգս։

200. Արդ պարիսպք պահակիս ուր ուրեք կանգունն են՝ ունին 24-26՝ բարձրութեան և 8՝ Թանձրութեան, 'ի կարմիր քարանց զանգեալ և սպիտակ վիմաք արտաքուստ ագուցեալ. Ձեմելիս լայնս 'ի վերայ ունելով՝ ելանելիս սանդխաք. եօԹն դրունք են քաղաքին. չորք ընդ հարաւ և մի ընդ հիւսիս, և մի 'ի միջնաբերդն հանելով, և միւսն է դերահռչակ Դուռնն ԵրկաԹի, զորոյ և զմի 'ի Թևոցն կարծեն լինել 'ի կէլաԹի վանս Վրաց, յորում գոյ արաբացի արձանագիր՝ որ ասէ հրամանաւ Ապուլսուարայ (ամիրայի Դունայ) շինեալ զայն յամին 1063, այլ չասէ ուր և վանն էր. Դաւիթ արքայ Վրաց եբարձ զայն 'ի Դարբանտայ 'ի սկիզբն ԺԲ դարու։ Քաղաքն ըստ կարի բարեձև է, այլ վանն տօԹոյ ամարայնոյ ոչ բարւոք 'ի բնակութիւն. նշանաւոր է 'ի շինուածսն մկիւԹ մի երկայն, կամարակապ սեամբք և գմբեԹաւ. միջնաբերդն 'ի բարձու յարևմտակողմն, յորոյ հարաւոյ սկանի պարիսպ պահակին. իսկ 'ի ծովուն չերևին արդ ոչ պարիսպք և ոչ հեաք ամբարտակաց՝ յորոց միջն ասի եղեալ նաւահանգիստ անքոյԹ. այժմ դըժուարամերձ են ափունք քաղաքին, նաւակաց ևԹ համարձակելիք, որք բառնան զքրքումՄ՝ զընտիր վաճառ քաղաքին։ Նշանաւորք են և գերեզմանք Դարբանտայ, և անուանի՝ կոչեցեալն Գրքքար, այսինքն Քառասանից մահմետականաց կոտորելոց 'ի քրիստոնէից կամ 'ի ԹամԹարաց։ 2000 տունք են քաղաքին, և բնակիչք 12,000, մահմետականք պարսկագունք, հրեայք 180 երդ, և հայք սակաւք. որոց նախնեաց բազում անգամ շահատակեալ է ընդ Դուռնս այս, մանաւանդ Վաղարշայ և որդւոյ նորին Խոսրովու և Թոռին՝ Տրդատայ. առ որով աւանդի Սուրենայ՝ եղբօր Լուսաւորչին մերոյ Թագաւորեալ անդ։ Յետ զարմիցն Տրդատայ՝ մեծն Վարդան հարեալ 'ի Հայս զպարսիկ մարզպանն Պահակին, էառ քանդեաց և զայն, և եւ զԴուռնն 'ի Վահան Թագաւորաղն Աղուանից. Թերեւս յանուն նորա կոչէր Վարդանեան դաշտ հիւսիսակողմն Դարբանտայ, ուր ՄազդուԹք բնակէին, ըստ աւանդութեան ուրումն 'ի մերոց նախնեաց։ Որք և ստէպ յիշեն մեռասան կամ երկոտասան ազգս կամ Թագաւորս բնակեալս 'ի լերինս՝ յայն կողմն պահակին, զորս տեսաք Դրանն վարձէին 'ի նիզակակցութիւն 'ի կարևոր պէտս մարտից. իսկ առեւելեալք՝ ընդ որս և ոմանք 'ի մերոց կրսեր պատմչաց՝ ազգս քսան և չորս ասեն յայնկոյս պահակին վտարեալս յԱղեքսանդրէ Մեծէ. զորս և առ հասարակ կոչմամբ ԳՈԳ ԵՒ ՄԱԳՈԳ (ԱՃՈՒՃ-ՄԱՃՈՒՃ) անուանեն, և 'ի նոցանէ խիԹան զաւերումն աշխարհաց 'ի կատարած ժամանակաց։



Ի խաչարձանաց Անւոյ. — Des Monuments d' Ani.